ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

15. 07. 2011

ԱՐՄԱՎԻՐԻ մարզի ՄՐԳԱՇԱՏԻ գյուղական համայնքում
2011թ.-ի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետվության ընդգրկված ժամանակահատվածում ՏԻՄ-ի մասին << օրենքով համայնքի ղեկավարին վերապահված պարտադիր, պետության կողմից պատվիրակված և կամավոր լիազորությունների շրջանակներում իրականացվել են ներքոհիշյալ հետևյալ գործառույթները:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց համայնքի բյուջեի կատարողականը 2011թ.-ի 1-ին կիսամյակի կտրվածքով, ըստ որի, հողի հարկը կազմում է 4900.0 հազ. դրամ, փաստացի գանձվել է 4550.5 հազ. դրամ, գույքահարկը՝ 1580.0 հազ. դրամ, փաստացի գանձվել է 1513.8 հազ. դրամ, ոչ հարկային եկամուտները կազմում է 1880.0 հազ. դրամ, փաստացի գանձվել է 1066.2 հազ. դրամ:

Բյուջեի եկամուտների կատարողականը կիսամյակի եկամուտների գծով փաստացի կազմում է 96.4 %, այդ թվում հողի հարկի գծով՝ 93.6 %, իսկ գույքահարկի գծով՝ 95.8 %:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ համայնքի եկամուտների հավաքագրումը գտնվում է պատշաճ մակարդակի վրա:

Տեղեկացնում ենք, որ 2011թ.-ին Մրգաշատ համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

Գյուղապետարանի 15% (7563.0 հազ. դրամ) համաֆինանսավորմամբ կատարվել են ոռոգման ներտնտեսային ցանցում 1670 մետր կիսախողովակների տեղադրման և 1000.0 հազ. դրամ համաֆինանսավորմամբ՝ խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ:

Համայնքի մանկապարտեզ են հաճախում 112 երեխաներ: Մեկ երեխայի հաշվով փաստացի ծախսը կազմել է մոտավորապես 6000 դրամ, սակայն ծնող. գումարը նախատեսվել է 2000 դրամ, մնացած ծախսերը կատարվել է գյուղապետարանի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է Մայրության և Գեղեցկության, Հաղթանակի տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ, որի ընթացքում թոշակառու 386 կանանց հանձնվել են նվերներ, Հայրենական մեծ պատերազմի 5 վետերաններին, Արցախյան ազատամարտի 5 վիրավոր ազատամարտիկներին և 3 զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրվել է 50000 -ական դրամ օգնություն:

- Ֆինանսական աջակցություն է տրամադրվել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին,
- պարբերաբար կատարվել են աղբահանության աշխատանքներ,
- ապահովվել է համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի շենքերի պահպանումը և շահագործումը,
- կատարվել է գյուղամիջյան ճանապարհների ավազապատում,

Հաշվետու ժամանակշրջանում համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն և հաշվի է առնվել նրանց առաջարկությունները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

Խոսելով կատարված աշխատանքների մասին անհրաժեշտություն եմ համարում անդրադառնալ այնպիսի հիմնախնդիրների լուծմանը, որոնք ներկայումս ծառացած են համայնքի առջև.

1. խմելու ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքների անավարտ վիճակը,
2. գյուղամիջյան կենտրոնական ճանապարհների վերանորոգման անհրաժեշտությունը:

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ*